

**ԵԼՀ ֆակուլտետի գիտխորհրդի՝
2020թ.-ի հունիսի 19-ին կայացած նիստի թիվ 9 արձանագրություն**

Օրակարգ

1. Բակալավրիատի և մագիստրատուրայի ուսուցման աշխատանքային պլանների հաստատում:
2. Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., դոցենտ Հ.Բաղդասարյանի տարեկան հաշվետվություն:
3. Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ա.Առաքելյանի տարեկան հաշվետվություն :
4. Ուսխորհրդի նախագահի հաշվետվություն:
5. Ավարտական աշխատանքների արդյունքների /առկա և հեռակա/ և մանկավարժական կրթաբլոկի ավարտական քննությունների արդյունքների ամփոփում:
6. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
7. Ընթացիկ հարցեր

Նիստին մասնակցում էին գիտխորհրդի 36 անդամներից 33-ը:

1. **ԼՄԵՑԻՆ՝** ԵԼՀ ֆակուլտետի դեկան Գ.Բարսեղյանը ողջունեց գիտխորհրդի անդամներին և նշեց, որ COVID-19 համավարակի բռնկման պատճառով, ստիպված է գիտխորհուրդը անցկացնել ZOOM հարթակով: Դեկանը անդրադարձավ օրակարգի առաջին հարցին և նշեց, որ հիմնվելով ամբիոնների վարիչների կողմից տրամադրած տվյալների վրա, բակալավրիատի և մագիստրատուրայի ուսուցման աշխատանքային պլանների գործընթացը նորմալ ու բնականոն հունով է ընթացել:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել բակալավրիատի և մագիստրատուրայի ուսուցման աշխատանքային պլանները: Որոշումն ընդունվեց միաձայն:

2. **ԼՄԵՑԻՆ՝** Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., դոցենտ Հ.Բաղդասարյանի տարեկան հաշվետվությունը: Հ.Բաղդասարյանը նշեց, որ 2019-2020 ուս. տարում ամբիոնը իր աշխատանքներն իրականացրել է մի քանի ուղղություններով՝ ուսումնական, ուսումնամեթոդական, գիտական և թարգմանչական, որոշակի աշխատանքներ են կատարվել նաև միջազգային համագործակցության զարգացման առումով:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին ամբիոնում ներդրվել են բակալավրի և մագիստրոսական նոր ծրագրեր, ամբիոնի կարևոր խնդիրներից էր նաև անհրաժեշտ մասնագիտական գրականության ձեռքբերումը: Այս ուստարվա 1-ին կիսամյակում ձեռք է բերվել արժեքավոր գրքեր, բառարաններ : Ամբիոնի կողմից

տպագրության է երաշխավորվել «Իսպաներենը միջազգային հարաբերություններում» դասագիրքը, որի հիմքում ընկած է միջգիտակարգային մոտեցումը: Մեծ աշխատանքներ են կատարվել նաև պորտուգալերենը ամբիոնի մագիստրոսական ծրագրում ներդնելու համար, կան անհրաժեշտ բոլոր պայմանները (համապատասխան 2 մասնագետներ, անհրաժեշտ մասնագիտական գրականություն): Ամբիոնի դասախոսները այս ուսումնական տարվա 1-ին կիսամյակում հրատարակել են 5 հոդված: Ինչպես և նախորդ տարիներին, այս տարի նույնպես ամբիոնը ակտիվորեն մասնակցել է «Իտալերեն լեզվի շաբաթը» ամենամյա միջոցառումներին: Ամբիոնին կից գործում է նաև ուսանողական թարգմանչական խմբակ, որտեղ ուսանողները հնարավորություն ունեն քննարկել թարգմանության տեսության ու պրակտիկայի հետ կապված տարբեր խնդիրներ, ներկայացնում են իրենց կատարած թարգմանությունները, որոնցից լավագույնները դասախոսների կողմից խմբագրվելուց հետո ընդգրկվում են ամբիոնի կողմից հրատարակվող «Ծաղիկ թարգմանությանց» մատենաշարում: Նոյեմբերին հրատարակվեց այս հանդեսի 4-րդ հերթական հատորը, որը նվիրված է ԵՊՀ-ի հարյուրամյակին: Միջազգային համագործակցության առումով Հ.Բաղդասարյանը կարևորեց այն հանգամանքը, որ առաջին կիսամյակում նորացվել է Սերվանտեսի ինստիտուտի՝ որպես իսպանագիտական ամենակարևոր կենտրոնի հետ համագործակցության պայմանագիրը: Այս համագործակցության շրջանակում ամբիոնի 2 դասախոս մասնակցել են դասընթացների և ստացել համապատասխան վկայական: Էրազմուս+ և համագործակցության այլ ծրագրերի շրջանակներում առաջին կիսամյակում ուսանողները հնարավորություն են ունեցել սովորել արտասահմանյան տարբեր բուհերում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հ.Բաղդասարյանի հաշվետվությունը գնահատել դրական:

3.ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի վարիչ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ա.Առաքելյանի տարեկան հաշվետվությունը : Ա.Առաքելյանը նշեց, որ 2019-2020 ուս. տարում առցանց եղանակով կազմակերպվել են բակալավրիատի և մագիստրատուրայի դասընթացները: Այս տարի արտասահմանյան գրականության գծով ավարտական աշխատանքներ պաշտպանեցին 60 շրջանավարտներ, որոնցից 49-ը առկա, իսկ 11-ը՝ հեռակա ուսուցմամբ: Ա.Առաքելյանը հավելեց, որ ներկայումս աշխատանքներ են իրականացվում լավագույններին ընդգրկելու ամբիոնի մագիստրատուրայում: Իրենց ավարտական թեզերը հաջողությամբ պաշտպանեցին նաև ամբիոնի յոթ մագիստրանտները, որոնցից վեցը արժանացան գերազանց գնահատականների: Նրանց որոշ մասը իրենց կրթությունը կշարունակեն ամբիոնի ասպիրանտուրայում: Ամբիոնի կողմից հաշվետու տարում զգալի աշխատանք իրականացվեց կրթական երկու նոր ծրագրի մշակման ուղղությամբ: Առաջինը բակալավրի ծրագիր է և ունի «Արտասահմանյան գրականություն և գրական-հրատարակչական գործ» անվանումը, երկրորդը մագիստրոսական ծրագիր է՝ «Արտասահմանյան գրականություն և գրական-մշակութային գործի մենեջմենթ» անվանումը: Երկու ծրագրերն էլ միտված

են արտասահմանյան գրականությունը, որպես առարկա, առավել մոտեցնել գործնական կյանքի պահանջներին: Ծրագրերը մշակելիս ամբիոնը հանգամանորեն ուսումնասիրել է ինչպես միջազգային փորձը, այնպես էլ հանրապետության կրթական և աշխատանքային շուկաների հնարավորությունները:

Ամբիոնում պատշաճ ուշադրություն է հատկացվել նաև գիտական- մեթոդական աշխատանքների կազմակերպմանը: Ամբիոնի դասախոսները պարբերաբար մասնակցել են և շարունակում են մասնակցել և՛ համալսարանում և՛ հանրապետության այլ բուհերում և արտերկրում անցկացվող զանազան գիտաժողովներին: / պրոֆ Ն.Էդոյան, պրոֆ. Տիգրան Միմյան, ամբիոնի դոցենտներ՝ Անուշ Սեդրակյան, Վահե Արսենյան, Աննա Եգանյան, ամբիոնի մագիստրանտներ, հայցորդներ ու ասպիրանտներ՝ Արեգա Համբարձումյան, Ամալյա Սողոմոնյան, Անի Ներսիսյան/: Հաշվետու տարում ամբիոնի աշխատակիցների կողմից տպագրվել է 15 հոդված, մեկ մենագրություն: Պատրաստ են տպագրության Հենրիկ Էդոյանի «Գրական երկ. մտահղացում և կատարում», ինչպես նաև Արա Առաքելյանի «Համեմատական գրականագիտության ներածություն» մենագրությունները: Ընթացքի մեջ է «Արտասահմանյան գրականության պատմություն» բուհական դասագրքի ստեղծման աշխատանքները:

Ամբիոնում հետազոտական աշխատանքներ են իրականացնում ութ ասպիրանտներ, որոնցից հինգը անգլո-ամերիկյան, երկուսը լատինամերիկյան, մեկը՝ իտալական գրականության մասնագիտություններով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ա.Առաքելյանի հաշվետվությունը գնահատել դրական:

4.ԼՍԵՑԻՆ՝ Ուսխորհրդի նախագահ Լ.Իշխանյանի հաշվետվությունը: Լ.Իշխանյանը նշեց, որ ԵԼՀ ուսանողական խորհրդի 2019-2020թթ. աշխատանքներում ակտիվ գործունեություն են ծավալել բոլոր հանձնաժողովները՝ գիտակրթական, մշակույթի, արտաքին կապերի, հասարակայնության հետ կապերի և լրատվության հարցերի, սպորտի իրավական, սոցիալական հարցերով հանձնաժողովները: ԵԼՀ ՈԻԽ արտաքին կապերի հանձնաժողովի կողմից կազմակերպվեց "Cultural Development for Tourism" թեմայով դասընթաց՝ համագործակցելով խաղաղության կորպուսի (Peace Corps) կամավորների հետ: Գիտակրթական հանձնաժողովի կողմից անցկացվեց <<Թարգմանության արվեստը>> թեմայով հանդիպում անվանի թարգմանիչ Արտաշես Տեր-Հովհաննիսյանի հետ, ով ներկայացրեց իր գրքերը՝ խոսելով թարգմանչական հմտությունների մասին: Մշակույթի հանձնաժողովի կողմից կազմակերպվեց "Sharing Essays" մրցույթը՝ գնահատելով essay գրելու հմտությունները: Համագործակցելով Ֆիլիպիններից Հայաստան եկած մեր ընկերների հետ՝ կազմակերպեցինք ֆիլիպինաիտալական Սուրբ ծնունդ՝ միջմշակութային օր ունենալով, տրնդեզ ԵԼՀ-ում՝ չմոռանալով մեր տոներն ու արմատները՝ ազգային պարեր, երգեր, կրակ, ազգային սեղան, հյուրեր տարբեր ֆակուլտետներից:

Ֆակուլտետի ուսանողական խորհուրդը արտակարգ դրության պայմաններում ուսանողների օրը բազմաբովանդակ է դարձրել՝ արդեն

կազմակերպելով առցանց հանդիպումներ թե՛ մասնագիտական, թե՛ ժամանցային, ունենալով տարբեր ոլորտների լավագույն մասնագետներին հյուր, ֆակուլտետի օտար լեզուներով բանավեճեր:

- Հրավիրվել են ռեսուրսների կառավարման, Body language, NLP բացառիկ մասնագետ Հակոբ Մակդիսը "Teacher-Student Non-verbal Communication" թեմայով՝ անդրադառնալով թիրախային կետերի՝ ուսանողի և դասախոսի՝ տարբեր մշակույթներից եկած հարաբերակցությանը, ինչպես նաև նորագույն ակցենտներով համալսարանի և աշխատաշուկայի միջև կապին:
- Ջենիսի ավագ դպրոցի իսպաներենի ուսուցիչ, բնիկ իսպանացի Էմիլի Փալմերը իսպաներեն ուսումնասիրող, սովորող ուսանողների հետ ունեցավ դասընթաց:
- Ֆիլիպինցիների հետ տեղի ունեցավ "Discover Your Love Language with Filipinos" դասընթացը,
- ԱՄՆ Կոլորադոյի Bible դպրոցի ղեկավար Միլի Քարփենթերի հետ անցկացվեց դասընթաց "Leadership" (առաջնորդության) թեմայով:

ԵԼՀ ուսանողական խորհրդի հյուրերի ցանկում են եղել նաև

- ՀՀ վաստակավոր արտիստ Բարկեն Չոբանյանը,
- ՀՀ վաստակավոր արտիստ Լալա Մնացականյանը,
- ՀՀ նախագահի մրցանակակիր, օպերային երգիչ Գուրգեն Տարին

ավարտվեց ԵԼՀ ՈԻԽ 2019-2020թթ. աշխատանքների ամփոփմամբ, ֆակուլտետի ակտիվ ուսխորհրդականներին պարգևատրումներով:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Լ.Իշխանյանի հաշվետվությունը գնահատել դրական:

4.ԼՍԵՑԻՆ՝ Ավարտական աշխատանքների արդյունքների /առկա և հեռակա/ և մանկավարժական կրթաբլոկի ավարտական քննությունների արդյունքների ամփոփման հարցը: ԵԼՀ ֆակուլտետի ղեկան Գ.Բարսեղյանը տեղեկացրեց, որ ավարտական քննությունները ընդհանուր առմամբ նորմալ ու բնականոն հունով են ընթացել և նշեց, որ այս ուսումնական տարվա ավարտական քննությունների ընթացքում թե՛ առկա, թե՛ հեռակա բաժիններում <<անբավարար>> գնահատական չի գրանցվել: Նա շնորհակալություն հայտնեց հանձնաժողովների նախագահներին ու անդամներին, ինչպես նաև գիտխորհրդի անդամ Իգոր Կարապետյանին մանկավարժական կրթաբլոկի քննությունների արդյունավետ ընթացքի համար :

5.ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի 2018 թ. առկա ասպիրանտ Ամալյա Արմենի Սողոմոնյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.դ. պրոֆ. Ա. Առաքելյանը, նշելով, որ Ա. Սողոմոնյանի

ատենախոսության թեման է «20-րդ դարի 2-րդ կեսի անգլիալեզու էմիգրանտական գրականությունը (Նաբոկով, Հուսեինի), որի ղեկավարն է դոցենտ Ա. Մեդրակյանը: Ա. Սողոմոնյանը տպագրության է պատրաստել 3 գիտական հոդված, հաճախել է

ասպիրանտական դասերին՝ ապահովելով համապատասխան քանակությամբ կրեդիտներ, մասնակցել է Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի Համաշխարհային գրականության ամբիոնի կողմից կազմակերպած «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ» խորագրով ամենամյա միջազգային գիտաժողովի աշխատանքներին, շարունակվում են աշխատանքները ատենախոսության վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ատեստավորել Ամալյա Սողոմոնյանին՝ բավարար համարելով կատարված աշխատանքը: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Անուշ Թաթուլի Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը: Ա.Մովսիսյանի ատենախոսությունը վերնագրված է «Լեզվական միջոցների առանձնահատկությունները հաշվապահական տեքստերում և դրանց թարգմանությունը հայերեն»:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Ռ.Ղազարյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ա.Խաչատրյանը, դոցենտ Գ.Գրիգորյանը նշեցին, որ թեման խիստ արդիական է և կարող է դառնալ հետազոտության առարկա:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ատենախոսության թեմայի արդիականությունն ու կարևորությունը՝ հաստատել թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հեռակա ասպիրանտ Անուշ Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպումով՝ «Լեզվական միջոցների առանձնահատկությունները հաշվապահական տեքստերում և դրանց թարգմանությունը հայերեն» թեման և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Թ., դոցենտ Ա. Խաչատրյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի

դասախոս, հեռակա ասպիրանտ Դիանա Հայրոյանի «Կերպարափոխության լեզվական դրսևորումը որպես թարգմանական խնդիր» ատենախոսության թեմայի գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիանա Հայրոյանի ատենախոսության գիտական ղեկավար Բ.Գ.Թ., դոցենտ Ս.Գաբրիելյանը մահացել է, թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Բ.Գ.Թ., դոցենտ Ռ.Ղազարյանը, դոցենտ Գ.Գրիգորյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ա. Խաչատրյանը և այլք առաջարկեցին ատենախոսության գիտական ղեկավար նշանակել թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի Բ.Գ.Թ., դոցենտ Աննա Վանիկի Խաչատրյանին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնել վերոնշյալը, հաստատել Դիանա Հայրոյանի՝ «Կերպարավորության լեզվական դրսևորումը որպես թարգմանական խնդիր» ատենախոսության գիտական ղեկավարի փոփոխությունը և ղեկավար նշանակել Բ.Գ.Թ., դոցենտ Աննա Վանիկի Խաչատրյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի առկա ուսուցման երկրորդ տարվա ասպիրանտ Համլետ Ռուդոլֆի Առաքելյանի ատեստավորման հարցը /գիտ. ղեկ. Բ.Գ.Դ., պրոֆ. Ս. Գասապարյան/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., պրոֆ. Ս. Գասապարյանը նշեց, որ այս ընթացքում Հ.Առաքելյանին հաջողվել է ամփոփել թեզի հիմնախնդիրներն ու ողջ տեսագործական նյութը: Հնարավորություն ունենալով փոխանակման ծրագրով աշխատել Գրանադայի համալսարանի գրադարաններում՝ ասպիրանտը հնարավորություն է ունեցել ծանոթանալու բազմաթիվ նոր հեղինակների աշխատանքների, որոնց անդրադարձը նույնպես արվել է աշխատանքի ներկայիս տարբերակում: Նա նշեց նաև, որ ասպիրանտը անցկացրել է երկու գիտափորձ՝ տեղի անգլախոս, ինչպես նաև անգլերենը՝ որպես երկրորդ օտար լեզու կիրառող համայնքի հետ: Պատրաստ են «Ներգործումը անգլերեն գովազդային մեդիադիսկուրսում» թեմայով Հ.Առաքելյանի ատենախոսության առաջին երկու գլուխներն ամբողջությամբ և երրորդ գլուխը՝ մասամբ: Այժմ նա ամփոփում և խմբագրում է անցկարած գիտափորձի արդյունքները: Այս տարվա ընթացքում տպագրվել է մեկ հոդված, ևս երկու հոդված՝ վերնագրված «Անգլերեն գովազդային մեդիադիսկուրսի ներգործման ու ընկալման առանձնահատկությունների շուրջ» և «Անգլերեն գովազդային մեդիադիսկուրսի ներգործման արդյունավետությունն ապահովող լեզվառճական տարրերի հնչյունական խումբը» այժմ ներկայացված են տպագրության: Պրոֆեսոր Ս. Գասապարյանը նշեց նաև, որ ասպիրանտի ատենախոսության հետ կապված աշխատանքներն ընթանում են ըստ սահմանված գրաֆիկի և աշխատանքային պլանիՔ

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հիմք ընդունելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Համլետ Առաքելյանին: Որոշումն ընդունվեց միաձայն :

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Գրիշա Գագիկի Գասապարյանի ատեստավորման հարցը /գիտ. ղեկ. Բ.Գ.Դ., պրոֆ. Ե. Երզնկյան/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ., պրոֆ. Ս. Գասապարյանը նշեց, որ ուսումնական տարվա ընթացքում Գրիշա Գասապարյանը զբաղվել է թեկնածուական աշխատանքի թեմայով գոյություն ունեցող հետազոտությունների ուսումնասիրմամբ՝ օգտվելով հասանելի էլեկտրոնային

նյութերից, ինչպես նաև գրադարանային ռեսուրսներից: Առաջին կիսամյակում միջբուհական փոխանակման ծրագրի շրջանակներում ասպիրանտը մասնակցել է ասպիրանտների համար նախատեսված շարժունության Լեհաստանում՝ Դաբրովա Գորնիչա համալսարանում: Մասնակցելով կրթության միջազգայնացման թեմայով ֆորումի՝ ձեռք է բերել գիտելիքներ և փորձ գործընկեր համալսարանների հետ համագործակցությունը շարունակելու և զարգացնելու համար: Երկրորդ կիսամյակում մասնակցել է միջբուհական փոխանակման ծրագրով կրեդիտային շարժունության Վենետիկի Կա՝ Ֆոսկարիի համալսարանի Լեզվաբանության և համեմատական մշակութաբանության ֆակուլտետում: Շարժունությունը ընդհատվել է COVID-19 վիրուսի բռնկման պատճառով՝ հետագայում շարունակելու հեռանկարով, սակայն այնտեղ անցկացրած շուրջ երկու ամիսների ընթացքում ֆակուլտետի գրադարաններում զբաղվել է տեսական գրականության ուսումնասիրությամբ, վերլուծությամբ և սինթեզմամբ, ինչպես նաև գործնական նյութ է հավաքել թեկնածուական աշխատանքի համար: Այս ընթացքում նաև մասնակցել է իտալերենի, հանրալեզվաբանության և անգլերենը հատուկ նպատակների համար դասընթացների: Ասպիրանտը տպագրության է հանձնել գիտական հոդված “Graffiti as a linguistic phenomenon: different approaches” վերնագրով՝ «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» գիտական հանդեսի 1.28 համարում: Ս. Գասպարյանը հավելեց, որ ասպիրանտի ատենախոսության հետ կապված աշխատանքներն ընթանում են ըստ սահմանված գրաֆիկի և աշխատանքային պլանի:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հիմք ընդունելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Գրիշա Գասպարյանին: Որոշումն ընդունվեց միաձայն :

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի առկա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Հովհաննես Արզամի Վանեսյանի ատեստավորման հարցը /գիտ. դեկ. բ.գ.թ., պրոֆ. Ա. Չուբարյան/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի բ.գ.թ., պրոֆ. Ա. Չուբարյանը նշեց, որ Հ.Վանեսյանը քննել և վերլուծության է ենթարկել ատենախոսության համար տեսական հիմք հանդիսացող մի շարք մասնագիտական ուսումնասիրություններ, հոդվածներ և այլ գիտահետազոտական աշխատանքներ: Այս նույն ժամանակահատվածում նաև հավաքագրվել է համապատասխան գործնական նյութ քանակական և որակական վերլուծություն իրականացնելու նպատակով: Գործնական նյութի վերլուծությունը նախատեսվում է իրականացնել հետազոտական աշխատանքի երկրորդ փուլում: Տպագրվել է մեկ գիտական աշխատանք Անգլիագիտական հետազոտությունների հայկական հանդեսում “Politeness and Its Perception by Armenian Learners of English: From Theory to Action” վերնագրով, և տպագրության է հանձնվել ևս մեկը՝ Օտար լեզուները մասնագիտական նպատակների համար հանդեսում “Apology: Language in Action” վերնագրով: Ա. Չուբարյանը նշեց նաև, որ ուսումնական տարվա ընթացքում

պարտադիր և կամընտրական դասընթացներին մասնակցելու արդյունքում ասպիրանտը հավաքել է համապատասխան թվով (32) կրեդիտներ: Ա. Չուբարյանը հավելեց նաև, որ ասպիրանտի ատենախոսության հետ կապված աշխատանքներն ընթանում են ըստ սահմանված գրաֆիկի և աշխատանքային պլանիՔ

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հիմք ընդունելով կատարված աշխատանքը՝ ատեստավորել Հովհաննես Վանեյանին: Որոշումն ընդունվեց միաձայն :

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Նելլի Սարգսյանի՝ «Փոխաբերության ստեղծման և թարգմանության ճանաչողական հայեցակերպը. ինտեգրացված մոտեցում» թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ Բ.Գ.Դ.,

պրոֆեսոր Ս. Գասպարյանը ներկայացրեց Նելլի Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հիմնավորումը: Անգլիական բանասիրության ամբիոնի դոցենտ, Բ.Գ.Դ. Գ. Մուրադյանը, պրոֆեսոր, Բ.Գ.Դ. Ա. Չուբարյանը և այլք նշեցին, որ ներկայացվող թեման գիտական, տեսական և գործնական առումներով խոստումնալից է, արդիական և տեսագործնական առումով՝ օգտակար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Նկատի ունենալով վերոնշյալ կարծիքները^ա հաստատել Նելլի

Սարգսյանի՝ «Փոխաբերության ստեղծման և թարգմանության ճանաչողական հայեցակերպը. ինտեգրացված մոտեցում» թեկնածուական ատենախոսության թեման և գիտական ղեկավար նշանակել Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ս. Գասպարյանին: Որոշումն ընդունվեց միաձայն :

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ Շեքսպիրագիտության կենտրոնի և Բայրոնագիտության կաբինետի նոր ղեկավարի ընտրության հարցը :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ս. Գասպարյանը, Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ա. Առաքելյանը, Բ.Գ.Դ., պրոֆեսոր Հ. Էդոյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Մելքոնյանը, մ.գ.դ., պրոֆեսոր Ի. Կարապետյանը, արտասահմանյան գրականության ամբիոնի ասպիրանտ Ա. Սողոմոնյանը շնորհակալություն հայտնեցին ԵԼՀ ֆակուլտետի նախկին ղեկան, Շեքսպիրագիտության կենտրոնի և Բայրոնագիտության կաբինետի նախկին ղեկավար Ս. Աբրահամյանին իր կատարած աշխատանքի համար և առաջարկեցին կենտրոնի և կաբինետի աշխատանքների կառավարման պարտականությունը հանձնարարել ԵԼՀ

Ֆակուլտետի ներկայիս դեկան, բ.գ.դ., դոցենտ Գ. Բարսեղյանին: Ելույթ ունեցողները պարտավորեցրին Գ. Բարսեղյանին էլ ավելի ակտիվացնել նշված օղակների գործունեությունը՝ հաշվի առնելով շեքսպիրյան ու Բայրոնյան գրական ժառանգության ուսումնասիրության կարևորությունը ժամանակակից երիտասարդ սերնդի կրթության գործում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Շեքսպիրագիտության կենտրոնի և Բայրոնագիտության կաբինետի ղեկավար հաստատել ԵԼՀ ֆակուլտետի դեկան, բ.գ.թ.,դոցենտ Գ.Բարսեղյանին : Որոշումն ընդունվեց միաձայն :

ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Տիգրան Սերժիկի Սիմյանի ղեկավարությամբ «IV-XIX-րդ դդ. հայկական քաղաքները հայ, ֆրանսիական և գերմանական գրականության մեջ. միկրոպատմություն, նշանագիտություն, տիպաբանություն» խորագրով գիտական թեմայի երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.դ. պրոֆ. Ա. Առաքելյանը, նշելով, որ թեման ուշագրավ է և արդիական, որը ընդգրկում է հայկական և պատմագրական մի շարք իրողություններ, մասնակիցները Հայ-ռուսական, Սորբոնի և Ռեգենսբուրգի համալսարանների հայ և օտարերկրյա գործընկերներ են:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով վերոնշյալը՝ երաշխավորել պրոֆեսոր, բ.գ.դ. Տիգրան Սերժիկի Սիմյանի ղեկավարությամբ «IV-XIX-րդ դդ. հայկական քաղաքները հայ, ֆրանսիական և գերմանական գրականության մեջ. միկրոպատմություն, նշանագիտություն, տիպաբանություն» խորագրով գիտական թեման՝ ՀՀ ԿԳՄՍ գիտական կոմիտեի հայտարարած գիտական թեմաների հայտերի մրցույթին ներկայացնելու համար: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., դոցենտ Հասմիկ Բաղդասարյանի և նույն ամբիոնի դասախոս՝ Մերի Մարտիրոսյանի՝ «Իսպաներենը միջազգային հարաբերություններում» դասագիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ն.Հարությունյանը, բ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գասպարյանը նշեցին, որ «Իսպաներենը միջազգային հարաբերություններում» դասագրքի հիմքում ընկած է միջգիտակարգային ուսուցումը, որը գիտելիքների ինտեգրման մեծ հնարավորություն է ընձեռում: Դասագիրքը բազմաբովանդակ է և ընդգրկում է հետևյալ հիմնական թեմատիկ շարքերը՝ *Իսպանիայի սահմանադրությունը և պետական կառուցվածքը, Դիվանագիտական հարաբերություններ, Եվրոպական միություն և Հայաստան, ՄԱԿ և Հայաստան, Այլ միջազգային կազմակերպությունները արդի աշխարհում (ԵՀԱԿ, ՆԱՏՕ, Եվրոպայի խորհուրդ, ԱՊՀ և այլն)*, ինչպես նաև միջազգային առյաններում դարաբաղյան հակամարտությանն ու Հայոց ցեղասպանության քննությանն առնչվող թեմատիկ տեքստեր, որոնք միտված են ոչ միայն հարստացնելու ուսանողների բառապաշարը,

այլ նաև ընդլայնելու նրանց աշխարհայացքը և զարգացնելու միջմշակութային հաղորդակցության իրազեկություններն ու քննադատական մտածողությունը: Դասագիրքն ունի կուռ կառուցվածք, ներառում է բազմաբնույթ վարժությունների համակարգ և ապահովում է փոխներգործուն մեթոդների կիրառումը: Այն նախատեսվում է բուհական համակարգում դասավանդվող «Իսպաներենը միջազգային հարաբերություններում», «Մասնագիտական տեքստերի թարգմանություն», «Քաղաքական-հասարակական տեքստերի թարգմանություն» դասընթացների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ռոմանական բանասիրության ամբիոնի վարիչ, բ.գ.դ., դոցենտ Հասմիկ Բաղդասարյանի և նույն ամբիոնի դասախոս՝ Մերի Մարտիրոսյանի՝ «Իսպաներենը միջազգային հարաբերություններում» դասագիրքը երաշխավորել տպագրության: Որոշումն ընդունվեց միաձայն :

ԵԼՀ ֆակուլտետի ղեկան և նիստի հանագահ

բ.գ.թ. դոցենտ՝



Գ.Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար



բ.գ.թ., դոցենտ՝

Մ. Դալայյան

19.06.2020թ.